ՀԱՅ ԷՋԵՐ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԻԿՆԵՐ

Քուչակեան այս նոթագիւտ տաղիկները մեզ հաղորդած է Հ. Մկրտիչ Պոտուրեան, որ զանոնք օրինակած է Պարտիզակ՝ Գ. Մինաս Սրբլեանի պատկանող Տաղարանէ մը, գրուած՝ մասամբ՝ 1659ին եւ մասամբ՝ 1690ին։ — Մեծարգոյ Մխիթարեանը ըստ Նոթայրի գրութեան օրինակած է՝ Նոյնութեամբ՝ երկու զատ տեղ գտնուող տաղաչարքերը իբրեւ երկու տաղեր. մէնք՝ ըստ մեր նախընտրած սխեմային՝ անոնց մէջէն տաղիկները (ամբողջ կամ կիսակատար) անջատելով կը հրատարակենք՝ իբրեւ իւրաքանչիւրը ինք իր մէջ ամբողջութիւն մը կազմող բանաստեղծութիւններ։

Գրնա՛, իմ հոգոյս հոգի, իմ սրտէ սիրած սիրելի,
Գրնա՛, իմ աչացրս լո՛յս, որ անէծքս ի՞նչ չի բանի :

Զիմ եարն ի գրնալ տեսայ, կանչեցի՝ «Իմ կարմի՛ր երես».
Դարձաւ ու նաւապ եառ թէ՝ «Քանի՛ ապլան զրուցես :
«Սեղծողն ինձ երես տուեր, ինչ աչեր, դու կանգնի՛ր ու տես»:
— Զդարտակ տեսնելն ի՞նչ անեմ՝ երբ ծոցուդ մահրում կու հանես.՝
Հանց որ մահրում կու հանես, բե՛ր պատանի՛ ու դիր գիս ի ներս :
— Հերի պատանին ի ներեմ, բանամ զծոցս՝ արե՛կ մուտ ի ներս :
— Առտուա՛ծ ոգորմի քո հօրն, ի՞նչ ադէկ թապիր մի կ'անես,
Կուտաս ինձ տունչ ու հոգի, մանուանեմ ի կեանս կու փոխես :

Թուխ աչէ 'ւիմ կամար ուներ, խորվեցիր գիս ներուից ի վեր.
Սպիտակ ծոցիկ ո՞վ տեսեր, խակ ծղներ որ դեռ չէ հասեր.
Զայն իւր խակ ու մակ ծղներն որ հազար նազով սընուցեր,
Զայն ալ իմ ծոցն եմ պահեր, քո . . . (1) մարդ չէ տեսեր :

Աչերուս խրտաս ելի բանց հազար ծրնող զաւակի,
Թ'Աբեկ որ ի վայր նրսիցնի, ասոնցնորս մեզ չի պիտի.
Աչերս այլ ի յիս ասաց թ'նս ըզմեզ խելօք գիտէի.
Զաղկէկն որ ի գնալ տեսնու՝ բեր աչեր որ գիճի չի նայի :

---

(1) Բառ մը պակաս։ Զեռագրին մէջ տեղը բաց չէ։

Խրնձորն ի ծառու նրդիճ՝ դու ի քո ժուսն ես հաղելու.
Բոլորդ ի չար փուռ ելնկած, ճար չունիմ ես ի մեզ գալու.
Երբամ ես ի փրշի դարեր ու զրեն հացնիմ կրնվելու.
Գամ ես նեռ փրշին կրնվիմ ու խրնձոր հաղեմ խաղալու :

Նկան էն խամազ մարդիկն (1) թէ՝ բե՛ր զքո եարն մեզ ցրցու.
Տեսնամ՝ ի՞նչ էէնմ ու սուրաթ ունի որ արեր զքեզ խեւ (2) կապելու(3) :
— Իմ եարն ի լուսնի նրման՝ թուխ ամպի միջին է գալու :

Կաւուկ մի ես երէկ տեսայ, շատ երնէկ գիւր տէրն որ ունի,
Ծոցիկն էր զրզած բամպկիկ ու երեսն էր վարդի պրպլուկ.
Պրուկիկրն շատար մաղեր, տուեցրն դեղ էր շատ հիւանցի :

Մրեկի իմ եարին արէք, գիս թոդեր է զո՛վ կու սիրէ.
Դրմա էն իրացն եղեր որ փոդոցն որքոս կու ելնկէ.
Գրնեիր չիր սիրեր դու գիս, է՞ր կ'ասիր՝ Թարկ զէն արեկ գիս սիրէ (4).
Հիմայ ես ի քեզ եկայ, դու կ'ասես թէ ինձ չի պիտէ :

Իմ եարս (5) այլ ի դուրս ելաւ շորորաց ի պաղչան զրնաց
Զեռին այլ ի ծառրն ոզեց՝ ծառերու նրդերն երեւաց.
Էրաց թէ խրնձոր հաղէ՝ իր ներմակ ծոցիկն երեւաց (6).
Այնչափ ճմռուռ չնմ(7) տեսեր, երբ տեսայ նա ուռմրս զրնաց:

Իմ բարձրագրնայ (8) լուսին, շատ բարձր կ'երթաս 'ւանա նուն.
Շատ երդիր (9) ի վայր իջնուս, շատ տեսնաս ջուխտակ եար(10) ի քուն.
Ով իմ եարոջրն (11) է քուն՝ չի վերնայ սրնարին ի զլխուն:

Կարմիր 'ւ խպիտակ երես (12), շատ մեղմուն արիր՝ թէ գիտես.
Կ'ուզեմ որ սիրեմ ըզքեզ. դու կ'ասես թէ՝ Մրսատր եմ ես.
Երբամ հանց վրկայ բերեմ՝ դու սիրոյ խրնձորն առեր ես.
Թոդեր ես (13) շանու բազան (14), ազրաւու ձաղրն կու սիրես.
Գազն երեսիդ տրվեր ես, այդ նազերդ ի ո՞ր (15) կու ծախես.
Մոխի'ռս աչերուդ վրայ՝ դու սիրու մարդրն թէ գիտես :

---

1) Զեռ. մարդիկն : 2) Զեռ. խեվ:
3) Սրկոռ վանդ սարելորդ կայ այս սաղին դեղ։
4) Ազատաղատած և սարելորդ թառերով լիցուսած դոշ:
5) Զեռ. եառս : 6) Զեռ. երեվաց: 7) Զեռ. չմնի։
8) Զեռ. բարձրագնա. 9) Զեռ. երթիր. 10) Զեռագ. եառ. 11) Զեռ. եառաջ. 12) Զեռ. երեր. 13) Զեռ. ճեռ երես. 14) Այսինի շանին բաղան. 15) Յեռ. ի վրա։

digitised by A.R.A.R.@